

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՔԵԱՐԹԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տ է Լ է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն).

Ցայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ. Տ է Լ է Ք օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յովսէփ Թադէոսեան իր կնոջ հետ միասին յայտնում են ազգականներին ու ծանօթներին

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ

մահվան մասին, որ տեղի է ունեցել Սօֆիայում: Հոգեհանգիստը կատարվելու է կիրակի օրը, մարտի 13 ին, Վանքի Մայր եկեղեցում: Հ. 2. 4.

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Կարևոր րօպէ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի հերքում. Իրաւունք ունեն. Երևանի խոռվութիւնները. Բազուի աղէտի զոհերի օգտին. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱՅԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԿԱՐԵՒՐ ԲՈՎՆ

Մեր երկրը պատրաստվում է լուրջ կերպով խօսել իր կարիքների մասին: Թէ լրագրներում, թէ քաղաքային դուռնաներում, թէ մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ քննվում են մեր երկրի պահանջները և մշակվում են ծրագրերը: Ներկայացնելու բարձր իշխանութեան, մայրաքաղաքի մամուլը սկսում է առանձին ուղարկութիւն նուիրել կովկասեան խնդիրներին և նրա օրգաններին մէկը, այն է «ԲՅԵՍ» լրագիրը նոյն իսկ բացել է Կովկասի համար մի յատուկ բաժին, որ տեղի հրատարակվում են յօդուածներ և նկատողութիւններ մեր երկրի և մեր ժողովրդի մասին:

Ներկայ րօպէում, երբ սպասվում է Կովկասում նոր փոխարքայ կոմս Վօրօնցով Դաշկովը, իսկ մայրաքաղաքում մշակվում են խոշոր փոփոխութիւնների նախագիծեր, անհրաժեշտ է, որ մեր երկրի գործերին ծանօթ անձինք լուրջ վերաբերվելով մեր սեղանի առաջ դրած կենսական կարևոր խնդիրներին, լուսաբանեն նրանց զօրաւոր փաստերով և դարձնեն նրանց համոզեցուցիչ, դիւրացնելով նրանց բաւարարութիւն տալը և գործադրութիւնը նպատակայարմար միջոցներով:

Այժմ բաւական ծրագրեր կան առաջարկված և բաւական կէտեր կան պարզաբանված: Մտնում է, որ հիմնական պահանջները ենթարկվեն լուրջ քննութեան և ձևակերպվեն աջող կերպով: Անկասկած, մեր երկրի բազմաթիւ պահանջներին մէջ կան աւելի և պակաս կարևորները, աւելի շտապողականները և այնպիսիները, որոնք կարող են փոքր ինչ սպասել իրանց հերթին: Ինչը ժամանակը պահանջում է շուտափոյթ բաւարարութիւն տալ խոշոր, կարևոր և անյետաճրգելի խնդիրներին, որովհետև կեանքը դուրս է եկել իւր սովորական ընթացքից և տարիներով բարդված կարիքները առաջարկ են ընկել առանձին ոյժով և հրամայողական ստիպողականութեամբ:

Րօպէն պահանջում է խտացրած և ուժեղացրած մտաւոր գործունէութիւն, բարոյական կորով և քաղաքացիական զգացմունքի արժանաւոր արտայայտութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀԵՐՔՈՒՄ

Թիֆլիսի նահանգի աշխուհանութեան պարագլուխ իշխան Դ. Մէլիքով տպագրել է «ԲՅԵՍ» լրագրի մէջ հետևեալ նամակը.

«Չարմանով կարգացի «Новое Время»-ի յայտարարութիւնը» (№ 10409), թէ մեր պետութեան ծայրերում—Լեհաստանում և Կով

կասում—շարունակվում են ոռու մարդկանց սպանութիւնները:

«Եւ որքան հիմնաւոր է ազգ յին տնտեսութեան արտայայտութիւն տեսնել այն փաստերի մէջ, որոնք տեղի են ունեցել Անդրկովկասում, կարելի է դատել նրանից, որ սպանութեան փորձերի զոհ դարձած պաշտօնական անձինք, մեծ մասամբ, ազգով ոռու չէին:

«Եւ առհասարակ, ազգային երկպառակութիւնների և կարծեցող դաւերի կարգում դատել Անդրկովկասում վերջին տարիները գոյութիւն ունեցող անկարգաւորութեան չափազանց բարդ և տխուր արտայայտութիւնը հազիւ թէ անտեղի չը լինի մեր ներկայ ծանր օրերում:

«Չորս նոյնպէս պ. Պոլոնսկի (Словоб) լրագրի, № 80), հիմնվելով «Кавказ» լրագրի վրա, պաշտօնական վաւերացման վրա, հաւատացնում է թէ Բազուի սարսափները հայ յեղափոխականների ձեռքի գործն են: Կարելի է միթէ ասել թէ որ և է մէկի գլուխը կարող էր մտնել միտք տանել իր ներկայիցներին, որոնք Կովկասում ամեն տեղ կողք կողքի տուած ապրում են ուրիշ ազգութիւնների հետ, ամբոխի գնդակների և դանակների տակ:

Նոյնպէս չէ կարելի յեղափոխական անուանել Դուրբայի շարժումը, որ ամբողջովին առաջ է եկել հողային պատճառներէ, ինչպէս և այն պատճառով, որ արդարադատութիւնը և վարչութիւնը խորթացած են ազգաբնակչութիւնից:

Այն բոլոր անկողնները, թէ հազարաւոր տարիներ միմեանց հետ խաղաղ ապրած, ազգակցութեան կապերով, գործնական և բարեկամական յարաբերութիւններով կապված ցեղերի մէջ ազգայնական թշնամութիւն կայ, ինչպէս և այն անկողնները թէ Կովկասի ազգերը ինչ-որ ֆանտաստիկական դաւեր ունեն, ձեռնտու են միայն անբարեխիղճ մարդկանց, որոնք տարածում են, օրինակ Թիֆլիսում, միաժամանակ լուրեր, որ իւր թէ վրացիները հայերին պիտի ջնջեն, հայերը վրացիներին, թուրքերը՝ հայերին, այս մի կամ այն մի ազգութիւնը՝ ոռուների և այլն: Համարձակվում են հաւատացնել որ ինձ, իբրև Թիֆլիսի նահանգական պարագլուխ, վախճում ու հարցութիւններով դիմել են բոլոր դատաւարներին և ազգութիւններին մարդիկ, թէ ճիշտ որ պիտի Բարթոլոմէան գերի, կամ աւելի ճիշտ՝ գերիներ սարքվին:

«Ժամանակ է դադարեցնել այդ դատարկ լուրերը: Կովկասում շատ կան վաղուց հասունացած, վաղուց լուծման սպասող հարցեր, բաւարարութիւն չը ստացած կենսական կարիքներ. և հազիւ թէ նպատակայարմար և հայրենասիրական գործ լինի ադաւաղել կեանքի գէպերի ընտրութիւնը ու միտքը, գէպերի, որոնք հաւասարապէս ծանր են թէ մեր երկրի և թէ ամբողջ պետութեան համար:

ԻՐԱՒՈՒՆԵՐ ՈՒՆԵՆ

II

Եթէ նոյն իսկ մի կողմ թողնենք եղբայրութեան և համերաշխութեան մեծ գաղափարը, Դուռայի նախապատրաստական ժողովի ջոշեարկութիւնը դարձեալ վերին աստիճանի պախարակելի կը մնայ, և այս անգամ արդէն արդարութեան, մեր երկրի ընդհանուր, առաջնակարգ շահերի տեսակէտից:

Եթէ այդ ժողովը հաւաքված լինէր քաղաքային մի սպանդանոցի, մի շրանքի կամ մի խանութի համար յանձնաժողով ընտրելու, մեր առանձին կարևորութիւն չէինք տայ

նրան, ինչպէս, հաւատացած ենք, չէին տայ և իրանք, վրացիները: Բայց ներկայ գէպը բոլորովին բացառիկ, բոլորովին արտասովոր հանգամանք ունի:

Եւ ընտրող եմ, և իմ առջև դնում են մի վերին աստիճանի կարևոր, փափուկ անհրաժեշտութիւն—ընտրել այնպիսի պատգամաւորներ, որոնք բարձր շրջաններում պիտի ներկայանան մեր լայնածաւալ երկրի (կամ հէնց քաղաքի) կարիքները, ճար ու դարման առաջարկեն, մի խօսքով իրանց կարողութեան չափ ջանք գործ դնեն, որ բարեփոխվեն ընդհանուր ազգաբնակչութեան վրա ծանրացած պայմանները, վերացվեն մեր երկրի առաջադիմութեան ճանապարհի վրա կուտված խոչընդոտները:

Շատ ու շատ նշանաւոր մի րօպէ: Յիսուն տարին մի անգամ հազիւ այսպիսի մի գէպը ներկայանայ հասարակական գործիչին: Հասկանալի է, թէ որքան լուրջ, մեծակշիռ պատասխանատուութիւն է ծանրանում ինձ, ընտրողիս վրա:

Եւ ես չափազանց խղճուկ, չափազանց սահմանափակ ու բութ մի հասարակական գործիչ կը լինեմ, եթէ այդ կարևոր րօպէին միայն մի նիղ աշխարհ տեսնեմ իմ աչքի առջև, այն է իմ սեփական տունը և նրա մէջ իմ ծանօթներին ու խնամիկներին: Ես կարող եմ չը հաւատալ եղբայրութեան գաղափարին, չը հաւատալ նրան կամ համակերպվող հանգրձն ցանկանկախութիւն պահպանել ինձ համար: Սա ճաշակի հարց է, կրթութեան, դաստիարակութեան հարց է: Բայց երբ ես յաւակնութիւն ունեմ կարծելու, թէ կարող եմ մի ամբողջ ահագին ազգաբնակչութեան ձգտումներին թարգման հանդիսանալ, երբ իմ առջև դրված է մի գործ, որ անպատճառ պիտի լուսաբանվի, պիտի պաշտպանվի այդ ազգաբնակչութեան մէջ մտնող բոլոր տարրերի կողմից, այդտեղ արդէն իմ սեփական շահը, իմ ցեղի շահը պահանջում է ինձանից, որ ես լինեմ լայն հայեացքների տէր, որ ես ընդգրկեմ իմ առջև բացված ամբողջ հորիզոնը և ոչ թէ նրա մի կտորը, մի կէտը միայն: Եւ երբ ես չեմ կարողանում հասկանալ րօպէի ամբողջ կարեւորութիւնը, հանգամանքի ամբողջ թոխըը, նշանակում է, որ ինձ չէ տուած մի լայն ստորագործութիւն ցոյց տալու շնորհ:

Եւ դրանով ես յանցանք եմ գործում նախ և առաջ և ամենից շատ իմ երկրի բարօրութեան դէմ: Եւ ոչ մի բանով արդարաւալ չեմ կարող ես եթէ ճանաչալ ֆրանկերով սկսեմ հաւատացնել, թէ ինձ համար հայն ու վրացին մի և նոյն են, թէ ես ասեմ թէ ընտրում եմ միայն նրան, ով, իմ կարծիքով, ամենից արժանաւորն է,—ինձ շատ հեշտ կերպով կարող են լուցնել, մատնացոյց անելով, որ ներկայ գէպը միայն իմ խօսքերը անտեղի են և անմատ: Եւ իրաւ, երբ հարց է գրված, որ մեր երկրի բոլոր ազգութիւնները ներկայացնեն իրանց ցանկերն ու հոգսերը, կարող եմ ես հաւատացնել գէթ մէկին, թէ իմ ընտրած հայը մի վրացու չափ լաւատեղեակ է վրաց կեանքին, հետեւաբար կարող է միանգամայն փոխարինել վրացի ներկայացուցչին: Դա կը լինէր մի անհեթեթութիւն:

Բայց կայ իմ ներկայիս, իմ սահմանափակ հասկացողութեան մէջ աւելի ևս յանցաւոր հանգամանք: Փակված մնալով ազգայնական—խնամիկական փոքրիկ, անդոյս խնուշի մէջ, ես իմ վարձուցով, իմ անընդունակութեամբ զրկում եմ մեր երկրի համար այնքան կարևոր կենսական գործը մի այնպիսի ուժեղ կուլտուրական տարրի աշակցութիւնից, ինչպիսին է վրաց ազգը: Դրանով ես արհամարհում եմ իր երկրի տէր, իր մտաւոր-կուլտուրական գործունէութեամբ այնքան աչքի ընկնող մի անագին ժողովրդի հոգեկան կարողութիւնը: Մի կողմ թողնելով այն, որ այդ արհամարհանքը պէտք է վերաւորէ, չէ կարող չը վերաւորել այդ ժողովրդի զգացմունքները, ես պիտի խոստովանեմ, որ դրանով ես արհամարհում եմ ինձ, լուռութեան և անգործու-

թեան ժառանգով մի շատ համակերպի, շատ օգտակար ոյժ, որ աւելի մեծ եռանդ է մղում պիտի մտնէ այն գործի մէջ, որին ծառայելու եմ կանչված: Արհամարհում եմ ինձ, այն, հէնց նրանով, որ այնպիսի մի հանգամանքի մէջ ինձ եմ վերապահում գործի ամբողջ ծանրութիւնը, մինչդեռ գիտեմ, որ իմ ոյժերը բաւական չեն և ես կարօտ եմ իմ անտես առաջ ազգութեան խելքին, մտքին, կարողութեան:

Ժամանակ է, այո՛, վաղուց ժամանակ է որ մենք հասկանանք վերջապէս թէ վրաց ազգը շատ և շատ բաներում մեզանից առաջ է անցել և մօտենալով այդ ազգին, տալով նրան պատշաճաւոր տեղը մեր երկրի հասարակական գործերի ասպարէզում, մենք ամենին շնորհ չենք անում նրան, ամենին ըստ իրականութիւն չենք անում, այլ միայն իրականութիւնը յարգելու պարտականութիւն ենք կատարում: Շնորհ կարող է անել միայն հարուստ աղբաւոր, բարձր ստորին: Բայց մենք և վրացիները երբեք այդ յարաբերութեան մէջ չենք եղել և այժմ էլ չենք: Մեր սեփական օգուտն է պահանջում լինել վրացիների հետ, որովհետև շատ բաներ կան, որոնց մէջ մենք ուղղակի պիտի աշակերտենք վրացիներին:

Չգուց երբ այս տողերով պիտի վերաւորենք մեր ազգային խնդրագրութիւնը, շօվինիզմը: Բայց ճշմարտութիւնը զոհն է ինքնագոհութեան երբեք չենք կարող: Իրողութիւններն են խօսում հրապարակի մէջ և ոչ թէ գոռոզութեան, ինքնաբաւականութեան փոքր:

Վրաց ինտելիգենցիան, յիշված իր ժողովրդի, իր հողի վրա, կատարում է այնպիսի մի կուլտուրական դեր, որ միայն երազել կարող է երեքուն, հողից կտրված, բուրժուականութեան և կապիտալիզմի մէջ փրկութիւն որոնող հայ ինտելիգենցիան: Տեսէք թէ որպիսի անխնայ եռանդով վրաց ինտելիգենցիան նուիրված է իր մայրենի գրականութեան և մամուլին, տեսէք թէ ժողովրդի հետ միացման գործով որքան նա առաջ է տանում տպագրական խօսքը, որի վայելած ժողովրդականութիւնը միանգամայն անօրինակ է կովկասեան բոլոր ազգերի պատմութեան մէջ: Վրաց «Ցիւրիա Փոլեցի» լրագիրը, ասում են, 7500 բաժանորդ ունի և այդ նախանձելի աշղուկութիւնը, որ ամբողջ հայ մամուլին սկզբից մինչև այսօր միայն մի հաւաքանք կարող է պատճառել, իրականութիւն դարձել է վերջին տարիների ընթացքում, մեր աչքի առջև, անխնայ, անձուկեղ աշխատութեան, ընկերական գործակցութեան շնորհիւ: Հէնց միայն այս աշղուկութիւնը ինչ նշանաւոր կուլտուրական ոյժ է՝ երկրի մէջ առաջադիմութեան սկզբունքները տարածելու համար: Նոյն ընկերական կազմակերպութեան միջոցով այժմ վերանորոգվել է և հին «Իվլիւս», փոխել է իր ուղղութիւնը, դարձել է մի առողջ ու համակերպի առաջնորդ ժողովրդի համար. վրացին 3 կօպէկով ձեռք է բերում նրա մի համարը:

Չնք ուղում և չենք էլ կարող, տարաբախտաբար, աւելի երկար, մանրամասն խօսել վրաց ազգութեան մէջ կատարվող հասարակական շարժումների, գաղափարների մասին: Բաւական համարենք միայն վրաց լեզուի բարգաւաճումը, որ հետևանք է զարգացած գրականութեան և մամուլի և որ, այսպիսի գնալով, կարող է դառնալ մի ընկնող ոյժ նոյն իսկ միւս ազգութիւնների համար: Մենք ինքներս յաճախ լսում ենք շատ հայերից փախսանք որ վրացիներ կարգաւ չը գիտեն: Եւ սա ընտան է, սա շատ հասկանալի, իրաւացի երեւոյթ է: Ոյժը առաջադիմութեան և զարգացման մէջ է—այս օրէնքը չնչն անկարելի է:

Ահա ինչ ոյժ, ինչ քաղաքակրթական կարողութիւն են արհամարհել Թիֆլիսի դուռայի ընտրողները: Դրանով նրանք արհամարհել են իրանց, դրանով շատ պարզ ցոյց են տուել թէ որքան նեղգիրտ, կարճատես հասարակական գործիչներ են:

Այժմ հարց է՝ ինչ են այդպիսի խելճու-

Նրեանեան հրապարակի վրա: